,

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑԻՉ__ ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԿԱԶՄԵՑ՝ ԱՐԵՎՀԱՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ <<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ԿԱՊԱՆ 2023

,

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն.....3

Գլուխ 1 Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը---------- 5

1.1 Համադպրոցական ծնողական ժողովների նպատակն ու խնդիրները--- 5

1.2 Դասարանական ժողովների նպատակն ու խնդիրները ----------6

1.3 Թեմատիկ ծնողական ժողովների նպատակն ու խնդիրները ---------- 9

1.4 Կազմակերպչական ժողովների նպատակն ու խնդիրները ----------11

Գլուխ 2 Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների հետ ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ ---------- 12

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ---------- 18

Հավելված_____19

,

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< Չկա այնպիսի վատ մարդ, ում լավ դաստիարակությունը նրան ավելի լավը չդարձնի >>

Վ. Գ. Բելինսկի

<<Ամեն մարդ երկու դաստիարակություն է ստանում. մեկը նրան տալիս են ծնողները՝ հաղորդելով իրենց կենսափորձը, մյուսը՝ ավելի կարևորը, նա ինքն է ստանում>>:

Թելման

Ընտանիքը մեր հասարակության հիմնական բջիջն է, ուստի ընտանեական դաստիարակությունը լոկ անձնական գործ չէ:Նրա դրական արդյունքների համար շահագրգռված է ողջ հասարակությունը: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է,ավանդույթների, սովորությունների , մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում: Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակակատարն է թե՛ դպրոցում, և թե՛ ընտանիքում:Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են,ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր,ապա հաղթանակն ապահովված է:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության,զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա,ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: <<Լավագույն պտուղներից ստացվում է լավ դաստիարակություն>> (Կ. Պրուտկով):

Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման,դաստիարակության,արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

,

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

.Գտնել ընտանիքի մեջ այն հնարավորությունները,որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա

.Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան

.Ներգրավել ծնողներին ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ: Այսօրվա խնդիրներից է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ են ծնողները ստանձնում միայն դիտորդի դերը:

<<Չկարծեք, թե դուք երեխաներին դաստիարակում եք միայն այն ժամանակ ,երբ նրանց հետ խոսում եք կամ խրատ տալիս, կամ հրամայում եք նրանց ,- ընդգծել է Ա. Ս. Մակարենկոն,- նրանց դաստիարակում եք ձեր կյանքի յուրաքանչյուր պահին, նույնիսկ այն ժամանակ, երբ տանը չեք:Ինչպես եք դուք հագնվում , ինչպես եք խոսում ուրիշ մարդկանց մասին,ինչպես եք վերաբերվում ձեր բարեկամներին և թշնամիներին, ինչպես եք ծիծաղում , թերթ կարդում , այս ամենը երեխաների համար մեծ նշանակություն ունի>>: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինենք, որպեսզի կարողանանք ծնողին դարձնել մեր խորհրդատուն, համախոհը և գործընկերը: Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցները դպրոցն ու ընտանիքն են:Վարքով ու հատկապես կարգապահությամբ է պայմանավորված սոցիալական միջավայրում իր տեղն ու դերը գտնելու,վերջիններս արդյունավետորեն արժևորելու փաստը: Այդ հարցում անփոխարինելի է կրթօջախների դերը: Ուստի սովորողին ուսումնասիրելիս ուսուցիչներն ուշադրություն են դարձնում դասարանում դրսևորած նրանց վարքին ու կարգապահությանը: Սրանցով է պայմանավորված սովորողների ունեցած ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը և իհարկե նաև կարողունակությունների աստիճանական կատարելագործումը: Հենց այս հարցերում է, որ պետք է պահպանել ուսուցիչ- ծնող սերտ կապը, որպեսզի սովորողը հասնի ուսումնական առաջադիմության առավելագույնին:

,

Այժմ մանրամասն ուսումնասիրենք ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցության մի քանի ձևեր: Դրանցից են.

- Ծնողական ժողովներ
- Հեռախոսակապ
- Էլեկտրոնային հաղորդակցություն

Դիտարկումների հիման վրա և վերլուծության մեթոդով աշխատանք կատարելով ներկայացնում եմ:

Գլուխ 1: ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձև է: Ծնողական ժողովները կարող են լինել

- Համադպրոցական
- Դասարանական
- Թեմատիկ
- Կազմակերպչական

1. 1.Համադպրոցական ծնողական ժողովների նպատակները և խնդիրները. Այս ժողովների ժամանակ հրավիրվում են դպրոցի բոլոր սովորողների ծնողները և քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում են բոլորին և ունեն համադպրոցական նշանակություն /հաշվետվություններ,դասգրքերի վարձավճարներ,համազգեստներ և այլն/:Այստեղ առավել կարևոր է շեշտը դնել համադպրոցական հարցերի քննարկման, արտադասարանական աշխատանքների մեջ ծնողների ներգրավվածության վրա՝ հաշվի առնելով նրանց կարծիքն ու նրանց տալով ընտրության հնարավորություն /էքսկուրսիաներ,շաբաթօրյակներ, միջանցքի կամ դահլիճի ձևավորում և այլն/:Որքան ծնողը շատ ժամանակ անցկացնի դպրոցում, այնքան սովորողը ծնողին անընդհատ դպրոցում տեսնելով՝ իրեն ավելի ոգևորված ու արժևորված կզգա:

,

1.2 Դասարանական ժողովների նպատակները և խնդիրները. Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն և լսեն միմյանց երրորդ կողմի՝ սովորողների խնդիրները:

Ծնողական ժողովները կազմակերպվում են դասղեկների կողմից և հիմնականում դասարանում սովորողների առաջադիմությունը քննարկելու և ամփոփելու նպատակով: Որոշ ծնողներ ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը,խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին,ինչը որ ինքնին շատ սխալ մոտեցում է: Երբեմն այդպիսի ծնողական ժողովները վերածվում են <<լավ>> և <<վատ>> գնահատականներ ունեցող սովորողներին գովելու կամ նախատելու գործընթացի, որն էլ իր հերթին շատ հաճախ ավարտվում է ծնողների դժգոհությամբ: Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ ներքոհիշյալ սխալները.

- Համեմատել մի սովորողին մյուսի հետ
- Բացասական գնահատական տալ ողջ դասարանին
- Գերագնահատել որևէ առարկայի կարևորությունը
- Նախատել որևէ ծնողի բոլորի ներկայությամբ

Լուրջ խնդիր է զարգացնել թե՛ ծնողի, թե՛ ուսուցչի ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը սովորողների նկատմամբ և, որ ամենակարևոր ու պարտադիր պայմաններից մեկն է՝ կարողանան լավ ճանաչել իրենց երեխաներին:

Ծնողներն ու ուսուցիչները նույն սովորողների դաստիարակներն են և ունեն ընդհանուր նպատակներ:Հետևաբար, որպեսզի սովորողի կրթության կազմակերպումն ու առօրյան լինեն լիարժեք,իսկ դաստիարակությունն՝ առավել արդյունավետ, անհրաժեշտ պայման է ծնող-ուսուցիչ սերտ կապն և փոխադարձ համագործակցությունը: Դպրոցը սովորողին տալիս է գիտելիքներ և իրականության նկատմաբ դաստիարակում գիտակացական վերաբերմունք: Իսկ ընտանիքը ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Սովորողի ներդաշնակ զարգացման համար վերոնշյալ որակները խիստ անհրաժեշտ են:

,

Ընտանիքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից սովորողները միայն շահում են:

Սովորողի դաստիարակության գործընթացում համար մեկ ազդեցիկ ուժը՝ սեփական օրինակն է, թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի:

Կրթության կազմակերպման հարցում ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար առաջարկում եմ թույլ տալ, որ ծնողները մասնակից դառնան դասավանդմանը՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները և նախօրոք ծանոթանալով սովորողի ուսումնական նյութին: Իրենց ծնողներին տեսնելով ներգրավված և համագործակցելիս՝ սովորողներն ավելի են խրախուսվում և ոգևորվում, ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից:

Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից շատ կարևոր է,որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով ,որը պետք է հետաքրքիր և արդիական լինի ծնողների համար: Դասղեկը կամ մանկավարժը պետք է ունենա հստակ նպատակ,ներկայացնի խնդիրները, որոնք որ պետք է լուծվեն համատեղ ուժերով՝ անչափ կարևորելով ծնողի դերը:Կարելի է օգտվել նաև համակարգչային ցուցադրություններից՝ հատկապես որպես ծնողական ժողովի վերջնական ամփոփում: Նշեմ մի քանի կանոններ,որոնք որ առաջարկում եմ կիրառել ծնողական ժողովների ժամանակ.

1) Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված ժամանակին
2) Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի օրակարգին
3) Ծնողական ժողովի օրակարգը պետք է լինի հրատապ և տեղին
4) Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ
5) Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն լավ նախապատրաստված
6) Ծնողական ժողովը պետք է սկսել լավ տրամադրությամբ և մեկ ու կես ժամից ավելի չպետք է տևի

,

7) Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ,հետո նոր անցնել բուն խնդիրների քննարկմանը
8) Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային
9) Դասղեկը պետք է լինի անաչառ, բարիացակամ և ունենա մանկավարժական տակտի զգացում:

Որպեսզի ծնողական ժողովը լինի արդյունավետ և ծառայի իր նպատակին, անհրաժեշտ է այն կազմակերպել երեք փուլով.

<u>1-ին փուլ Նախապատրաստում</u>

1. Ժողովի նպատակի ընտրություն
2. Մասնակիցների կազմի ընտրություն
3. Սովորողների առաջադիմության թերթիկի նախապատրաստում
4. Դասասենյակի ձևավորում
5. Իրազեկում

<u>2-րդ փուլ Անցկացում</u>

1. Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
2. Դասարանում տիրող սոցիալ-հոգեբանկան մթնոլորտի ներկայացում
3. Հոգեբանա-մանկավարժական խորհրդատվություն
4. Կազմակերպչական աշխատանքների քննարկում

<u>3-րդ փուլ Արդյունքների ամփոփում</u>

1. Կատարել եզրակացություններ
2. Կայացնել որոշումներ
3. Ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին՝ նախօրոք նախապատրաստելով հարցաթերթիկներ, ծնողների գնահատականների, առաջարկությունների,հարցերի վերաբերյալ:

Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը:

,

Հաճախ անհարաժեշտություն է լինում հանդիպել ծնողի /կամ ծնողներից մի քանիսի/ հետ առանձին՝ որևէ խնդրին լուծում տալու համար: Նման դեպքերում կարելի է լավ առաջադիմություն ունեցող աշակերտի ծնողին/կամ ծնողներին/ խնդրել,որ թույլ տան իրենց երեխային /կամ երեխաներից մի քանիսին/ այցելել դասընկերոջը՝ նրան օգնելու, և դասերը սովորեցնելու հարցում: Նման դեպքերում սովորողներն ավելի են մտերմանում և նրանց մոտ զարգանում է խմբով աշխատելու հմտությունները:

Որպեսզի ուսուցիչ-ծնող-սովորող փոխադարձ համագործակցությունը ավելի մտերմիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ արշավներ,էքսկուրսիաներ կամ հանրօգուտ աշխատանքներ:

1.3 <u>Թեմատիկ ծնողական ժողովների նպատակները և խնդիրները.</u>Այս ժողովներն անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով, որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին:

Ներկայացնեմ կոնկրետ թեմատիկ ծնողական ժողովի օրինակ, որի թեման է <<Օգնություն հիմնական դպրոցի շրջանավարտին մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ>> :Այս ժողովի նպատակներն են.

,

1. Ծնողներին օգնել հաղորդակցվել իրենց երեխաների հետ՝ նախնական մասնագիտական կողմնորոշման խնդիրների շուրջ:
2. Ծնողներին տեղեկացնել և ծանոթացնել 9-րդ դասարանն ավարտելուց հետո իրենց երեխաների ուսումը շարունակելու վերաբերյալ:

<u>Նախապատրաստական աշխատանքներ</u>

Պատրաստել հարցաթերթիկներ և՛ ծնողների, և՛ սովորողների համար:

Հարցաթերթիկում կարելի է ներառել սովորողներին ուղղված հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ գիտես մասնագիտությունների մասին:
   - ☐ Ունեմ որոշակի գիտելիքներ
   - ☐ Ոչինչ չգիտեմ
2. 9-րդ դասարանն ավարտելիս
   - ☐ Կշարունակես ուսումն ավագ դպրոցում
   - ☐ Քոլեջում
   - ☐ Դեռ չես որոշել
3. Որոշե՞լ ես թե ինչ կուզենայիր դառնալ:
   - ☐ որոշել եմ
   - ☐ չեմ որոշել
4. Առաջին հերթին ու՞մ հետ կխորհրդակցի իր մասնագիտական կրթության ընտրության վերաբերյալ.
   - ☐ Դասղեկի կամ ուսուցչի
   - ☐ Ծնողների
   - ☐ Ընկերների
   - ☐ Ինքդ կորոշեիր

Ծնողների համար նախատեսված հարցաթերթիկում կարելի է ներառել հետևյալ հարցերը

1. Զրուցե՞լ եք արդյոք ձեր երեխայի հետ՝ նրա ապագա մասնագիտության ընտրության շուրջ:
2. Խոսե՞լ եք արդյոք ուսումը շարունակելու հնարավորությունների մասին և այլընտրանքների մասին:

,

3. Կարծու՞մ եք արդյոք , որ ձեր երեխան կարող է ինքնուրույն որոշում կայացնել մասնագիտություն ընտրելիս:
4. Համարո՞ւմ եք արդյոք, ո՞ր ձեր երեխայի ապագա մասնագիտության ընտրությունն ամբողջովին ձեզանից է կախված:
5. Տեղյա՞կ եք արդյոք,թե որ մասնագիտություններն առավել պահանջարկ ունեն:

Հարցաթերթիկների լրացումից հետո կատարվում է արդյունքների քննարկում: Ցանկալի է որ ծնողի ու իր երեխայի վերջնական տեսակետներն համընկնեն:Այս հարցում մեծ դեր է խաղում դասղեկի ուղղորդումը՝ հիմնվելով սովորողի առաջադիմության և ընդունակությունների վրա: Պետք է հաշվի առնվի նաև սովորողի նախասիրություններն ու հակումները:Պետք չէ անտեսել մասնագիտական կողմնորոշման հարցում նաև սովորողի հասակակիցների ազդեցությունը:Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ դեռահասներից շատերի համար ընկերների կարծիքն ավելի մեծ կշիռ ունի,քան ծնողներինը և ուսուցիչներինը: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հաշվի առնել սովորողի ընտրության հարցում ընկերների ազդեցության գործոնը և այն, թե որքանով կարող է այդ ազդեցությունը դրական լինել:Ամեն դեպքում պետք է նրբանկատ լինել,որպեսզի ակնհայտ բացասաբար չարտահայտվենք ընկերների մասին: Ժողովի արդյունքների ամփոփումից հետո դասղեկը ևս մեկ անգամ կարևորում է քննարկվող խնդիրը,նշելով, որ այդ հարցերի շուրջ քննարկումները կշարունակվեն մինչև ուսումնական տարվա ավարտը: Դասղեկը ծնողներին խնդրում է իրեն օգնել՝ աշակերտների հետ տարբեր մասնագետների հետ կազմակերպել հանդիպումներ, ինչպես նաև տարբեր կազմակերպություններ այցելություններ:

1.4 <u>Կազմակերպչական ծնողական ժողովների</u> նպատակն է հաշվի առնելով ծնողների կարծիքներն ու տալով նրանց ընտրության հնարավորություն, համատեղ լուծել դասարանում մի շարք կազմակերպչական խնդիրներ: Այդպիսի խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի:Օրինակ՝ դասարանական միջոցառումների,էքսկուր-սիաների,արշավների,զբոսանք բնության գրկում,դասարանական ցերեկույթների կազմակերպում, դասասենյակի , միջանցքի, կամ որևէ վահանակի ձևավորում և այլն: Երբ քննարկումներն ավարտվում են և աշխատանքները բաժանվում, սկսվում են կազմակերպչական աշխատանքները:

,

Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող-ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ:Իրենց հերթին սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին: Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում՝ առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին:

ԳԼՈՒԽ 2: ՈՒՍՈՒՑԻՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ժամանակակից զարգացած տեխնիկական միջոցները լայն ու բազմազան շփման հնարավորություններ են ընձեռնում: Ծնողն ու ուսուցիչը օրվա յուրանքանչյուր վայրկյան հասնելի են միմյանց համար,որն էլ շատ կարևոր գործոն է և ունի մեծ նշանակություն ուսուցիչ-ծնող փոխաարձ համագործակցության վրա:Բազմազան ու բազմաֆունկցիոնալ են առցանց հարթակները, որտեղ ազատ կերպով կարող են շփվել ուսուցիչները, ծնողներն ու սովորողները:Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել ամեն ինչ: Նման շփումներն ու համագործակցություններն ունեն իրենց առավելությունները:Օրինակ՝ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան մինչև ծնողն ինքը կմոտենա, կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ ժողովի ժամանակ:Ուսուցիչը պետք է նմանատիպ խնդիրների դեպքում կապ հաստատի ծնողի հետ անմիջապես լինի դա հեռախոսով, սոցիալական ցանցի միջոցով, թե էլեկտրոնային փոստով:

Սովորողն հաջողության կհասնի միայն այն դեպքում,երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով իրեն կուղղորդեն և՛ ծնողը, և՛ ուսուցիչը միաժամանակ: Ճիշտ է, ժամանակակից ծնողներն ունեն որոշ գիտելիքներ e-mail, viber, mesenger ծրագրերի, facebook,telegram,instagram,twitter և այլ սոցիալական ցանցերի մասին,սակայն առաջարկում եմ ծնողական համալսարանում անընդհատ թարմացնել ծնողների գիտելիքները ժամանակակից հաղորդակցման գործիքների, դրանց ընձեռնած հնարավորությունների ու արդյունավետության մասին:

,

Եթե ծնողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի,էլեկտրոնային նամակների տեսքով անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին: Խնայելով ժամանակը և տարածությունը, կարելի է ծնողական ժողով հրավիրելուց առաջ որևէ սոցիալական հարթակում քննարկել ծնողների հետ ժողովի թեման,նպատակները, դրա կարևորությունն ու հրատապությունը:

Որպեսզի ուսուցիչն ունենա իր ծնողների կոնտակտային տվյալները,նրանց հետ անընդհատ կապի մեջ լինելու համար և հարցումների վրա շատ ժամանակ չծախսի, կարող է նախապես պատրաստել հարցաթերթիկ և դրա հղումը ուղարկել որևէ հարթակում ստեղծված ծնողների խմբին: Երբ յուրաքանչյուր ծնող իր հերթին լրացնի հարցաթերթիկը,ուսուցիչը կունենա բոլորի կողմից լրացված տվյալները:
Այսօր գոյություն ունեն այնպիսի ծրագրեր,որոնք սահմանափակում են սովորողի մուտքը համացանց: Կարևոր է, որ ծնողների հետ անընդհատ կազմակերպվեն քննարկումներ, հրավիրվեն մասնագետներ, ովքեր որ կկարողանան սպառիչ պատասխան տալ ուսուցիչների և ծնողների մոտ առաջացած հարցերին: Նմանատիպ վտանգավոր դեպքերից կարելի է խուսափել միայն համատեղ գործելով և վերահսկողությունը խստացնելով թե՛ դպրոցում, թե՛ տանը կհասնենք արդյունքի:

Ստորև բերված գծապատկերում հստակ երևում է, որ ինչքան բարձր մակարդակով և սերտ է ուսուցչի փոխադարձ համագործակցությունը ծնողի հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում,այնքան արդյունավետ է կրթության կազմակերպումն ու դաստիարակությունը:

,


120
100
80
60
40
20
0
ուսուցիչ
ծնող
արդյունք

,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծնողի և ուսուցչի փոխադարձ համագործակցություն նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն՝ սովորողի հաջողությունների և կրթության որակի բարձրացմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:Այն միավորում է ծնողներին ու ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն և ազդեն սովորողի առաջադիմության վրա: Այս հետազոտության արդյունքում ինձ համար առավել պարզ դարձավ, որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է ուսուցչի հետ, ապա այդ համագործակցությունից սովորողի մոտ բարձրանում է առաջադիմության, զարգացվածության մակարդակը, բարելավվում է հաճախելիության ցուցանիշը: Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչը պետք է ամեն ինչ անի,որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան:Սովորողների մոտ զարգանում են սոցիալական կարողունակություններ և նրանց վարքը դառնում է դրական ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:Ուստի և՛ ծնողը, և՛ ուսուցիչը անընդհատ, փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ սովորողի ուսման որակը բարձրացնելու համար: Թվարկված գործոններն հանդիսանում են հենց այն կարևոր գործոնները, որոնք ազդում են սովորողի վրա և՛ դպրոցում սովորելիս, և ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:Երբ սովորողի առջև դրվում է միևնույն պահանջը և՛ տանը, և՛ դպրոցում, սովորողն ինքնին դառնում է ավելի կարգապահ, կազմակերպված և պատասխանատու:

<<Ուսուցչի փոխադարձ համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում>> թեմայով հետազոտական աշխատանքը սկսելուց առաջ, ինչպես ենթադրում էի, արդարացան իմ սպասելիքները: Դրանք են.

- Սովորողի հաճախելիության ապահովում
- Սովորողի լավ վարք
- Սովորողի բարձր առաջադիմություն
- Ծնողների վստահության բարձրացում ուսման և դպրոցի նկատմամբ

,

Սովորողներն էլ իրենց հերթին մոտիվացվում են սովորել այնպիսի միջավայրում,որտեղ իրենց ծնողին

- Ընդունում,հարգում և գնահատում են
- Համարում են գործընկերներ
- Տալիս են մասնակցության հնարավորություն դպրոցական միջոցառումներին
- Տալիս են հնարավորություն շփվելու դպրոցի անձնակազմի հետ
- Տալիս են օգտակար տեղեկատվություն երեխաների,ուսումնական ծրագրերի և այլնի մասին:

Կառանձնացնեմ նաև այն բոլոր <<օգուտները>>, որոնք որ ստանում են ուսուցիչ-ծնող-սովորող-դպրոց փոխադարձ համագործակցության ընթացքում, յուրաքանչյուրն իր հերթին.

Օգուտ սովորողին

1.Սովորողն ավելի դրական է տրամադրվում դպրոցի հանդեպ

2.Մեծանում է վստահությունը սեփական անձի և ապագայի հանդեպ

3.Անկախ սովորողի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, երբ ծնողն ու ուսուցիչը փոխադարձ համագործակցում են,սովորողի մոտ բարձրանում է նոր ձեռքբերումների մակարդակը

Օգուտ ծնողին

1.Սկսում է ավելի շատ ուշադրություն հատկացնել երեխայի սոցիալական և մտավոր զարգացման վրա

2.Սկսում է ավելի շատ հասկանալ ու ճանաչել իր երեխային

3.Ավելի շատ ուշադրություն է դարձնում իր սեփական գիտելիքները թարմացնելու և զարգացնելու վրա,աշխատում է զարգացնել նոր հմտություններ

4.Սկսում է ավելի վարժ և վստահ տիրապետել իր երեխայի վիճակի մասին տեղեկատվությանը և ժամանակին է լուծում խնդիրը՝ ուսուցչի հետ միասին

Օգուտ ուսուցչին

1.Ծնողի հետ փոխադարձ համագործակցության արդյունքում ուսուցիչը ստանում է

,

սպառիչ տեղեկություն յուրաքանչյուր սովորողի մասին ըստ այդմ ցուցաբերում է անհատական մոտեցում, ինչի արդյունքում էլ ստանում է ցանկալի արդյունք:

2.Ուսուցիչը ունենում է միշտ լավ արդյունքներ

3.Ուսուցիչի մոտ բարձրանում է ինքնավստահությունը և հարգանքը իր մասնագիտությաննկատմամբ

<u>Օգուտ դպրոցին</u>

Ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցությունը դրական է ազդում նաև դպրոցի վրա

1.Դպրոցն ստանում է ավելի մեծ աջակցություն ծնողների կողմից

2.հասարակության մեջ բարձրանում է դպրոցի հեղինակությունը

3.տարեկան կտրվածքով բարձրանում է դպրոցի բոլոր ցուցանիշների մակարդակը



Ուստի ուսուցիչ ծնող համագործակցությունը պետք է լինի՝ ուժեղ, կենտրոնացած և դրական՝ սովորողների ուսմանը աջակցող:

,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն.Ի.Բոլդիրև <<Դասղեկ>>, Երևան 1974թ
2. Մ.Մելքումյան <<Մակարենկոն ընտանեական դաստիարակության մասին>> Երևան,1985թ
3. Ռուզաննա Մուրադյան <<Դասղեկ>> մեթոդական ձեռնարկ,Երևան 2007
4. ԿԱԻ <<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում>>, Երևան 2012
5. <<Ընտանիք և դպրոց >> 2013-2, 2013-5, 2014-1-2
6. Նախաշավիղ-4, 2016թ.
7. <<Դասղեկական աշխատանքը >> դպրոցում-2014 թ.

Հավելված

Օրվա դասի պլան 1

,

Դասարանը՝ 7–րդ

Առարկան՝ Հայոց լեզու

Ուսուցիչ՝ Արևհատ Մաթևոսյան

Դասի թեման՝ Ածական թեմայի ամփոփում

Դասի նպատակը՝

- ձևավորել որակական և հարաբերական ածականները տարբերակելու և խոսքի մեջ ճիշտ կիրառելու կարողություն
- նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառելու կարողության ձևավորմանը
- զարգացնել պատկերավոր խոսք կազմելու կարողությունը
- ձևավորել ածական–որոշիչ–մակդիր երևույթը,դրա նշանակությունը՝ որպես գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոց ընկալելու կարողություն

Դասի վերջնարդյունքները՝ Սովորողը՝

- կճանաչի ածականի հիմնական հատկանիշները
- կտարբերակի ածականի տեսակները,կկազմի հարաբերական ածականներ,դրանք կկիրառի խոսքի մեջ
- կկազմի որակական ածականի համեմատության աստիճաններ

· օտար լեզուններ
· կենսաբանություն
· ինֆորմատիկա

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, տետր, քարտեր

Մեթոդներ՝ ավանդական, մտագրոհ, հարց ու պատասխան, կենտրոններով աշխատանք

Դասի ընթացքը

Խթանում

«Մտագրոհ»

· Ի՞նչ է ցույց տալիս ածականը։
· Ի՞նչ հարցերի է պատասխանում։
· Քանի՞ տեսակի են լինում ածականները։
· Ինչպե՞ս են կազմվում որակական ածականների համեմատության աստիճանները։
· Ի՞նչ պաշտոն է կատարում ածականը նախադասության մեջ։

Իմաստի ընկալում

Քայլ 1. Խաղ գնդակով՝ «Գոյական–Ածական» Ուսուցիչը,գնդակը նետելով աշակերտներին, անվանում է մի գոյական։Աշակերտը,որը բռնել է գնդակը, ածականով բնութագրում է նշված գոյականը և գնդակը նետում ուսուցչին։

Քայլ 2. Բաժանվել խմբերի՝ ըստ բանաստեղծների գրած բանաստեղծությունների տողերի

,

1–ին խումբ՝ Ս. Կապուտիկյան «Մասիսին մոտիկ»

Դու այսօր այնքան մաքո՛ւր ես, Մասի՛ս,
Գույներդ այնպես ջի՛նջ են, նրբերա՛նգ,
Ասես չես նյութված քար ու ավազից,
Այլ ջրաներկով գծված ես բարակ։

2–րդ խումբ՝ Համլետ Կարճիկյան «Հայոց լեզու»

Հանապազօրյա հաց դու մեր միակ
Արարման օրից Արարատ սարի,
Մաքառումների դրոշ հուրհրան՝
Բարձրացած պայծառ բարձունքը դարիս։

3–րդ խումբ՝ Հովհաննես Շիրազ

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ,
Մայրս մի մայր հասարակ,
Մայրս այս մայր երկրի մեջ,
Արևի դեմ մի ճրագ։

4–րդ խումբ՝ Պարույր Սևակ «ԵՐԵՎԱՆ-ԷՐԵԲՈՒՆԻ»

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր պոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք։

Քայլ 3.

Յուրաքանչյուր խումբ իր բանաստեղծության հատվածից դուրս է գրում ածականները,կազմում համեմատության աստիճանները։

Քայլ 4.

Կապակցություններն արտահայտել մեկ ածական անվամբ։

1–ին խումբ՝ ճահիճներով պատված
մանրէներ ծնող
մորը սիրող

2–րդ խումբ՝ միշտ փթթած
թախծոտ դեմքով

,

միրգ տվող

3–րդ խումբ՝ նոր տնկած
նուրբ հնչող
շահույթ բերող

4–րդ խումբ՝ շատ շնորհներ ունեցող
ինչքից զուրկ
ոսկուց ձուլված

Քայլ 5.

Տրված գոյականներից ստանալ հարաբերական ածականներ։

1–ին խումբ՝ երկաթ,ոսկի,փայտ
2–րդ խումբ՝ բուրդ,ուսում,հայր
3–րդ խումբ՝ մայր,տուն,աշակերտ
4–րդ խումբ՝ արև,մարդ,գյուղ

Քայլ 6.

Խաղ՝ մեջքին փակցված կենդանիներին բնութագրել ածականներով և գուշակել։

Քայլ 7.

Կազմել տրված որակական ածականների համեմատության աստիճանները։

1–ին խումբ՝ մեծ,խոր,ամայի,ստերջ
2–րդ խումբ՝ ուժեղ,ամուրի,լուսավոր,խուլ
3–րդ խումբ՝ լավ,կույր,քաղցր,վերջին
4–րդ խումբ՝ մեղմ,գեղեցիկ,հղի,մերկ

Քայլ 8.

Ունկնդրել Եղ. Չարենցի «Հայրենիքում» բանաստեղծության հիման վրա գրված երգը։Երգից դուրս գրել ածականները։

Քայլ 9.

Լրացնել բաց թողնված ածականները։

1–ին խումբ՝ Թե ————————փեսայի հանդիպես,որդի ունեցար,թե————————փեսայի՝ կորցրիր աղջկադ։
2–րդ խումբ՝ ————————բերքից հետո էլ պետք է ցանք անել։
3–րդ խումբ՝ ————————գործ կատարելուց հետո պետք չէ այլևս այլ բան ցանկանաս։

,

4–րդ խումբ՝ Վեհանձն մարդիկ ——————————առևտրականներ են։

Կշռադատում

Քարտեզագրում



Անդրադարձ՝

Ելքի քարտ «2 աստղ և մեկ ցանկություն»

- Ինձ դուր եկավ։
- Ինձ դուր եկավ։
- Ցանկություն

Հետադարձ կապ

Գնահատում

Տնային աշխատանք՝ Կազմել նախադասություններ՝կիրառելով համապատասխան ածականներ,դրանք ներկայացնել դիմախաղով։

Օրվա դասի պլան 2

Դասարանը՝ 7–րդ

Առարկան՝ Գրականություն

Ուսուցչուհի՝ Արևհատ Մաթևոսյան

Դասի թեման՝ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը

Դասի նպատակը՝

- Զարգացնել պատկերավոր խոսք կազմելու կարողություն
- Ամրապնդել բանաստեղծության մեջ պատկերված հայրենիքի,կարոտի,մարդկային ապրումների և զգացողությունների մասին պատկերացումը
- Նպաստել մշակութային կարողունակության զարգացմանը

,

Դասի վերջնարդյունքները՝ Սովորողները՝

- կկարողանան արտահայտիչ կարդալ,ապա անգիր ներկայացնել բանաստեղծությունն ամբողջությամբ կամ որոշ հատվածներ
- կմեկնաբանեն գրողի գործածած բառապաշարը,պատկերավորման միջոցները,

կարժևորեն դրանց գործածությունը ստեղծագործությունում

Խաչվող հասկացություններ՝

- կառուցվածք և գործառույթ
- օրինաչափություն
- անհատ և հարաբերություն
- կայունություն և փոփոխություն

Միջառարկայական կապեր՝ Հայոց լեզու,Պատմություն,Արվեստ,Ազգային երգ ու պար,Հայրենագիտություն

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք,լրացուցիչ գրականություն՝ «Եղիշե Չարենց»,նկարներ,համակարգիչ,բառարան

Մեթոդներ,հնարներ՝ ԽԻԿ,,մտագրոհ,քառաբաժան

Դասի ընթացքը

Խթանում

«Մտագրոհ»

1.Ե. Չարենցի մասին
2.ընտանիքը
3.մանկությունը
4.պատանեկությունը
5.սերը
6.Արփենիկը
7.երեխաները
8.«Չարենց» կեղծանունը
9. «Տաղարան» շարքը

Իմաստի ընկալում

1. «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության մասին
ա. որ շարքում է

,

բ.ինչ տեղ է գրավում շարքում
գ.երբ է գրվել
դ.լեզուն(տարբերությունը շարքի մյուս բանաստեղծություններից)
ե.1–ին տողը

2.Ընթերցել բանաստեղծությունը,ամեն մի տողին համապատասխան ցուցադրել 1 նկար

3.Դասարանը բաժանել 4 խմբի

ա.յուրաքանչյուր խումբ վերլուծի,մեկնաբանի 1 քառատող
բ.բառային աշխատանք

1–ին խումբ– գտնել 1–ին քառատողի մեջ գործածված բարդ բառերը,ցույց տալ արմատները՝ արևահամ,ողբանվագ, լացակումած,արնանման,հեզաճկուն
2–րդ խումբ– գտնել 2–րդ քառատողում գործածված բարդ և ածանցավոր բառերը,ցույց տալ արմատները և ածանցները՝ անհյուրընկալ,հնամյա,հազարամյա
3–րդ խումբ–դուրս գրել բարդ բառերը և ցույց տալ արմատները 3–րդ քառատողից՝ ողբաձայն,երկաթագիր,արյունաքամ,արնավառ
4–րդ խումբ–դուրս գրել հատուկ անունները,բացատրել գրությունը՝ Նարեկացի,Քուչակ,Արարատ,Մասիս

Ովքե՞ր են Նարեկացին,Քուչակը,ի՞նչ են գրել։Լսել երաժշտությունը։
գ. Տեքստային աշխատանք

1–ին խումբ՝ 1.Ի՞նչ է կոչվում արևահամ բար և արևահամ բառ,ասել արևահամ բառեր։
2.Ինչո՞ւ է մեր սազի լարը ողբանվագ,իսկ ծաղիկները՝ արնանման։
2–րդ խումբ՝ 1. Ի՞նչ հնամյա քաղաքներ գիտեք։
2.Ճարտարապետական ի՞նչ կոթողներ ունենք։
3–րդ խումբ՝ 1.Ո՞ր գիրքն է աղոթք դարձել։
2.Ձեր կարծիքով որո՞նք են հայ ժողովրդի արյունաքամ վերքերը։
4–րդ խումբ՝ 1. Ինչո՞ւ է Չարենցը Նարեկացուն,Քուչակին անվանում լուսապսակ։
2.Ինչո՞ւ Արարատի նման ճերմակ գագաթ չկա։

Կշռադատում՝ քառաբաժան

1–ին–Ի՞նչ տեսա
2–րդ– Ի՞նչ լսեցի
3–րդ– Ի՞նչ զգացի
4–րդ–Ինչպիսի՞ն կցանկանայի տեսնել հայրենիքս։

Անդրադարձ՝ ելքի քարտ
Գնահատում
Տնային աշխատանք՝ Վարժ,գեղեցիկ առոգանությամբ կարդալ դասը։Ի՞նչ են գրել մեծեչը բանաստեղծության մասին։

,

Օրվա դասի պլան 3

Դասարանը՝ 7–րդ

Ուսուցիչը՝ Արևհատ Մաթևոսյան

Առարկան՝ Գրականություն

Դասի թեման՝ Հ. Սահյանի ստեղծագործությունները
«Մասրենի» բանաստեղծությունը

Դասի նպատակը՝

- նպաստել բառապաշարի հարստացմանը
- զարգացնել միտքը արտահայտելու կարողություններ
- ձևավորել գեղարվեստական ճաշակի պատկերավոր մտածողության կարողություն
- զարգացնել գեղարվեստական խոսքի նրբերանգները իր խոսքում կիրառելու կարողություն
- դաստիարակել հայրենասիրություն

Դասի վերջնարդյունքները՝ Սովորողը կկարողանա

- ներկայացնել ստեղծագործության ընդհանուր բովանդակությունը
- ներկայացնել ստեղծագործության մեջ արծարծված հիմնական գաղափարը,դատողություններ անել դրանց վերաբերյալ
- համադրել բնություն–մարդ դաշինքը
- վերլուծել բանաստեղծությունը՝ինքնուրույն մոտեցումներ ներկայացնելով
- կիրառել գրագետ խոսք
- ամփոփել իմացածը

Խաչվող հակացություններ՝ օրինաչափություն,անհատ և հարաբերություն,պատճառ ը հետևանք

,

Միջառարկայական կապեր՝ Բնագիտություն,Աշխարհագրություն,Հայոց լեզու,Հասարակագիտություն

Ուսումնական նյութեր՝ դասագիրք,Հ.Սահյանի հատորներ,նկարներ,դիտողական պարագաներ

Մեթոդներ, հնարներ՝ ԽԻԿ, մտագրոհ, զրույց, աղյուսակ

Դասի ընթացք

Խթանում

Հարցեր ուղղել դասարանին 1. Հ. Սահյանի կենսագրության շուրջ
2.Հ. Սահյանի քնարերգության մեջ բովանդակային ուղղությունները՝ երգ երգ մասին, բնության երգը,Հայաստանի երգը,աշխատանքի երգը։
Այս ամենը միասնաբար որպես մարդու և հավերժության երգ։

Իմաստի ընկալում

1.Ընթերցող – գրող փոխհարաբերության մասին
2.Սահյանի հիմնական ժողովածուները,ժամանակագրական ցանկ
3.Մեծերը Սահյանի մասին
ա. Հ. Մաթևոսյան
բ.Կայսին Կուլին–բալկար բանաստեղծ
գ.Լև Օզերով–ռուս բանաստեղծ
4.Մեկնաբանություններ Սահյան ստեղծագործությունների շուրջ
5.«Անտառում» բանաստեղծության մեկնաբանում Հարցեր և պատասխաններ բաժնից

Նոր դասի հաղորդում

Կարդալ մասրենուն նվիրված բանաստեղծություններ
1.«Պտուղդ քաղող չկա»……«Սեզամ բացվիր»
2.«Մասուրը շիկնեց թփին»……«Դաղձի ծաղիկ»
3.«Ճանաչվեինք»……«Դաղձի ծաղիկ»
4.«Մասրենու մենախոսությունը»……«Դաղձի ծաղիկ»

Ներկայացնել «Մասրենի» բանաստեղծությունը

Կշռադատում

Բաժանել 6 հոգուց բաղկացած խմբերի՝ ըստ աշնանային գույների
ա. կարմիրներ–Սահյանի գրքից դուրս դրել մասրենուն նվիրված բանաստեղծություններ
բ.կանաչներ–Մասրենուն՝ բանաստեղծի տված բ նութագրական հատկանիշները
գ.դեղիններ–Տեղեկատու աղբյուրներից հավաքած տվյալներ մասրենու մասին
դ.կապույտներ–«Մասրենի» բանաստեղծությունից դուրս գրել հանգուցային բառեր,գրել փոքրիկ շարադրություն

Անդրադարձ՝Քառաբաժան

,

Գնահատում

Տնային աշխատանք՝ 1.Կարդալ,մեկնաբանել բանաստեղծությունը

2.Գործնական աշխատանք՝ Նկարազարդել Սահյանի որևէ բանաստեղծություն